ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 56 03 60, էլ. հասցե foi@foi.am, www.foi.am
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

08.10.2013թ.
210-ի 7

Երեւանի քաղաքապետ
պարոն Տարոն Մարգարյանին

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Մարգարյան,

Ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 27 և 27.1 հոդվածների և “Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ խնդրում ենք տրամադրել հետեւյալ տեղեկությունները.

1. Երեւանի քաղաքապետարանի ենթակայության տակ գտնվող հանրակրթական դպրոցներից յուրաքանչյուրի համար հավաքարարի քանի՞ հաստիք է սահմանված (յուրաքանչյուր դպրոցում քանի՞ հավաքարար է աշխատում),
2. Հավաքարարների հետ կնքված պայմանագրերի համաձայն ո՞ր տարածքների մաքրությունն իրականացնելն է մտնում հավաքարարի պարտականությունների մեջ,
3. Արդյոք դասասենյակների մաքրությունն իրականացնելը մտնու՞մ է հավաքարարի պարտականությունների մեջ:

“Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում: Ուստի, խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցումին պատասխանել օրենքով սահմանված ժամկետներում:

Կանխավ շնորհակալ եմ:

ԻԱԿ իրավաբան Գեւորգ Հայրապետյան